KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
Տնօրենների խորհրդին

Մենք իրականացրել ենք «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (Ընկերություն) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Այս ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկության ֆինանսական վիճակը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ նշում

Ընկերության 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որի 2014թ. ապրիլի 23-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Գործընկեր

KPMG Armenia ysc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
22 ապրիլի 2015թ.